Ակումբի սրահը յարմարեցուած էր Խորհուրդի նիստերին: Մէջտեղը դրաւել էին պատգամաւորները. բեմի վրա՝ նախագահութիւնը: Ներկայ էր կառավարութիւնը ամբողջ կազմով: Ձախ օթեակը բռնում էին Գերմանիայի, Աւստրև-Հունգարիայի, Թիւրքիայի ներկայացուցիչները, պարսից հիւպատոսը և ռուս ու մահմետական ազգ. խորհուրդների ներկայացուցիչները: Աջ օթեակում նստած էին բանակի հրամանատար զօր. Նազարբէգեանը, զօր. Սիլիկեանը և ուրիշ զինուորականներ: Մամուլի ներկայացուցիչներին յատկացուած էր առանձին տեղ: Դահլիճի յետևի մասը և վերնայարկը բերնէ բերան բռնուած էին հասարակութեամբ:

Հայաստանի Խորհրդի պատգամաւորները դասաւորուած էին նախօրօք սահմանուած կարգով. աջ կողմը նստած էին Հայ Ժողովրդական կուսակցութեան անդամների և մահմետականների, եզիդների ու ռուսների ներկայացուցիչները: Կենտրոնում և ձախ կողմի մի մասում՝ դաշնակցականները, իսկ ձախակողմում՝ սոց.-դեմոկրատներն ու սոց.-յեղափոխականները:

Հայաստանի անդրանիկ օրէնսդրական մարմնի առաջին նիստը բանալու պատիւը վիճակուեց Հ. Ազգ. Խորհրդի նախագահ Ա. Սահակեանին: Խորին լռութեան մէջ բեմ ելաւ նա և արտասանեց բացման ճառը, որը տեղն ու տեղը թարգմանուեց ռուսերէն ու թուրքերէն լեզուներով:

«Փաղաքացինե՛ր, պատգամաւորներ Հայաստանի Խորհրդի:

Գերագոյն Հայոց Ազգային Խորհրդի կողմից ես պատիւ ունեմ այսօր բաց անել անդրանիկ նիստը Հայաստանի Խորհրդի և յայտարարել, որ այսուհետև սա՛ է միակ լիազօր մարմինը՝ ամփոփող իր մէջ Հայաստանի Հանրապետութեան պետական իշխանութեան:

Այս օրը կը դառնայ մեզ համար պատմական և կը բանայ մի նոր լուսաւոր դարաշրջան մեր երիտասարդ պետութեան կեանքում, ինքնուրոյն քաղաքական և տնտեսական զարգացման:

Այս օրը կը մնայ միշտ յիշատակելի և ա՛յն պատճառով, որ առաջին անգամ իրականացած ենք տեսնում մեր նեղ հորիզոնի սահմաններում գեղեցիկ երազանքն ու նուիրական տենչը ինքնորոշման, թէև անհնարին դժուարին պայմաններում:

Ենթադրելով, որ մեր երկրի անկախութեան հարցին չատերը ձեզանից լաւատեղեակ չեն՝ ես յոյժ կարևոր եմ գտնում այս բարձր ժողովին ներկայացնել այն փուլերը, որոնցով անցել է սկզբից մինչև իր վերջին ձևակերպումը անկախ պետութիւնների գաղափարը Անդրկովկասում:

Մեր հանրապետութիւնը, ինչպէս և միւսները, հանդէս եկան իբրև անկախ պետութիւններ ա՛յն օրից, երբ Անդրկովկասեան Սէյմը մայիս 26-ին իրեն յայտարարեց կազմալուծած. վրաց սոցիալ-դեմոկրատ Ֆրակցիայի նախաձեռնութեամբ և առաջարկութեամբ նոյն օրն իսկ Վրաստանը յայտարարեց իրեն անկախ:

Անդրկովկասի ամբողջութիւնը փլուելուց յետոյ մեր երկիրը թողնուած էր իր բախտին, ուստի Հայոց Ազգային Խորհուրդը չտապեց իր վրա վերցնել կառավարութեան բոլոր ֆունկցիաները:

Հէնց այդ ժամանակն էր, որ ստացուեց օսմանեան կառավարութեան բոլորին յայտնի վերջնագիրը նոր հողային գրաւումների մասին և պահանջում էր պատասխան 48 ժամուայ ընթացքում: Գերագոյն Խորհրդի կողմից